

լալով. Առ յինէն զընծայս իմ զսիրտս, զի այլ  
 ոչինչ ունիմ. եւ բժշկեալ զիս, ով սուրբ  
 պատկեր սքանչելագործ: Եւ իսկոյն հաստա- 100  
 տեցաւ սիրտն ի տեղի իւր ողջացեալ: Փառք  
 Աստուծոյ:

Չոր եւ մեք գետնամած խոնարհեալ  
 երկրպագութիւն մատուցաք եւ մեղաց թո-  
 դութիւն խնդրեցաք մեզ եւ մեր ննջեցելոց: 105

Եւ կացաք անդ երեք օր. զի երեք օր  
 հաց եւ ջուր տային Հայոց ուխտաւորացն եւ  
 իւրեանց ազգին մէկ օր. եւ Հայոց հաւ ու  
 սագ կու տային. եւ Ֆռանկաց միս լոկ  
 միայն: 110

Եւ Վէնէտիկու մինչ ի մեծն Հռոմ ԺՆ.  
 Իջեաւնք է. ամէնն շէն եւ պարսպաւոր ի վե-  
 րայ բարձր լերանց, ծովու եզերօքն. եւ ա-  
 մէն քաղաք վասն սիրոյն Քրիստոսի եւ Հայոց  
 եկեղեցի, հոգէտուն քարէ շինած էր եւ երեք 115  
 օր կերակուր կ'եւնէր: Ապա զի Հայք այժմ  
 սակաւ գնան, տարին մի, երկու կամ երեք,  
 չորս, վասն որոյ զաֆթ արին Ֆռանկնին զա-  
 մենն եւ տիրապետեցին. եւ ինքեանք կենան  
 այն տներն: 120

Բայց Փափին երկրին Ֆռանկնին յոյժ աս-  
 տուածավախ եւ երկիւղածք են, հիւրասէր,  
 ողորմած, հեզ եւ խոնարհ. եւս առաւել յոր-  
 ժամ զհայ տեսանեն՝ ցնծան եւ խնդան, փա-  
 րին եւ փաղաքչին եւ մեծ սէր եւ գութ ցու- 125  
 ցանեն: Ապա մեր ազգն յոյժ վատ եւ ան-  
 միարան է, սէր չունի եւ շատաշրջիկ, եւ